մարմնավոր գործերը: Նորոգեց եկեղեցու խախտված տանիքը, եկեղեցու արևմտյան դռան դիմաց շինեց փայտյա գավիթը, տնտեսատունը, խցերը, շինեց ձիթհանքեր և ջրաղաց, անասունների գոմեր, ձիերի ախոռներ, խաշների փարախներ: Հավաքեց շատ անասուններ, ոչխարներ և այլ բազմաթիվ արդյունքներ:

Նաև աղոթասեր էր, երբեմն-երբեմն աներևութանում էր և գնում էր անտառների պուրակները և աներկբա մտքերով առ Աստված աղոթում էր օրը մի անգամ կամ երկու, ապա վերադառնում էր վանքը: Այս իր համար մշտական սովորույթ էր արել: Նույնպես մի օր աներևութացավ, կարծում էին, թե այսօր կգա: Երեք օր հետո եկավ՝ իր հետ ունենալով բուրվառ և Մաշտոց[100]: Հարցրին նրան, որտեղի՞ց ես գալիս, ի՞նչ են դրանք: Իսկ նա չէր հայտնում իր արածները:

Վանքում Ստեփանոս անունով կոստանդնուպոլսեցի մի պարկեշտ աբեղա կար. նա ասաց, թե բազմաթիվ մենակյացներ է թաղել դա. գիտեմ, որ այժմ գնացել է այդ բանի համար, ահա ունի Մաշտոց ու բուրվառ: Աղաչեցին շատ թախանձանքներով, ասաց՝ օտար մեռյալ կար վանքի վերևը, գնացի նրան թաղեցի: Մենք կրկին աղաչեցինք, որ անունն ասի և տեղը ցույց տա: Ասաց՝ նրա անունը Մինաս է և այսինչ տեղում է: Մենք գնացինք, գտանք և համբուրեցինք երանելի ճգնավորի գերեզմանը և վերադարձանք վանք: Հարցրինք եպիսկոպոսին, թե քանի տարի է նրա այնտեղ լինելը: Եպիսկոպոսը ասաց՝ վեց տարի է, իսկ ամեն ուրբաթ նրան երկու հաց էին տանում. և այդ էր նրա կերակուրը մինչև մյուս ուրբաթ: Ձմեռը գալիս էր վանքի մոտ այսինչ տեղը, ես հաց էի տալիս նրան: Ամառները ես գնում էի նրա մոտ: Այս բանը նույնպես աղաչեցին նրան, որը և պատմեց ամենը:

Եվ այսպես բարի վարքով մնաց վանքում բազում տարիներ: Հետո գնաց Փիլիպոս կաթողիկոսի մոտ և նրանից խնդրեց փիլիսոփա վարդապետ Մովսեսին, որ Կոտայք գավառի Տաճարաբակ[101] գյուղից էր: Նրան բերեց նշանակեց վանքի առաջնորդ, իսկ ինքը հրաժարվելով շրջում էր վանքերում, անապատներում աղոթելու համար:

Փիլիպոսից հետո կաթողիկոս եղավ Հակոբ Ջուղայեցին, որը Փիլիպոս եպիսկոպոսին տարավ Սուրբ Էջմիածին և նշանակեց խոտովանահայր բոլոր միաբանների վրա: Սուրբ աթոռում միառ-

ժամանակ մնալուց հետո տկարացավ փոքր-ինչ և խնդրեց իրեն տանել իր բնիկ վանքը՝ Բջնի, որպեսզի այնտեղ մեռնի: Հասավ իր հայրենի գյուղը՝ Քանաքեռ, գյուղացիները հավաքվեցին նրա մոտ, չքողին գնալ Բջնի: Մնաց այնտեղ Քանաքեռում. երկու օրից հետո մեռավ, թաղեցին Սուրբ Հակոբ եկեղեցու դռանը: Երբ հասավ եկեղեցուն, ասաց՝ գնամ պարոն Տիրի գերեզմանը համբուրեմ: Երբ մոտեցավ, տեսավ երեք ճրագ է վառվում, կարծեց՝ իրոք ճրագ է: Երբ մոտեցավ, երեք ճրագները միացան և մտան եկեղեցու լուսանցից: Իսկ ուրացող Թաղեոսը շատ արցունք թափեց եպիսկոպոսի գերեզմանի վրա: Եվ զղջաց իր չարագործության համար, գնաց Սևանա կղզին, դարձավ մենակյաց և ապաշխարելով այնտեղ մեռավ: Փիլիպոս եպիսկոպոսը ապրեց երկրի վրա բարի վարքով և փոխվեց Քրիստոսի մոտ նրա շնորհներով, որին փառք հավիտյանս:

ԳԼՈՒԽ ԽԴ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՐՔՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Սա Կարբի գյուղաքաղաքից էր, մեծ տոհմից էր, որ կոչվում էր Թմոքենք, այժմ անվանվում են Սահակյաններ: Արհեստով ներկաբար էր, բայց՝ պարկեշտ և բարեսեր: Իր արհեստի համար ինչ վարձ որ տալիս էին, առնում էր ու չէր նայում՝ շատ է, թե քիչ: Նաև աղոթասեր էր, իր խանութն էլ մոտ էր եկեղեցուն: Աղոթքի ժամին գնում էր եկեղեցի և մինչև եկեղեցու ժամասացության ավարտը եկեղեցուց դուրս չէր գալիս: Նաև սիրում էր աբեղաներին ու մենակյացներին: Եթե պատահեր, որ նրանց տեսներ, հարցնում էր որտեղից լինելը, տերերի որպիսությունը, աղոթքների կարգերը և սիրում էր նրանց վարքը:

Սույն ժամանակ հայտնվեց Տաթևացի Մովսես վարդապետը և ուսուցանում էր աստվածային խոսքերը: Հովհաննեսը գնալով նրա մոտ և նրանից սովորեց ամբողջ Աստվածաշունչը սկզբից մինչև վերջ՝ հինը և նորը, ամբողջ պատմությունը, ինչ որ տեսավ, սովորեց ամբողջը անպակաս կերպով: Եվ ապա վարդապետի պատվերով գնաց Լիմ[102] անապատը և եղավ կուսակրոն աբեղա: Խստակրոն